բազոյն է քան զբնակութիւն հաւուց մերոց ի սուրբ դազար... յետ այսորիկ գողութեամբ մտի ի քաղաքն, ի վանգն Ֆրանչիսկանաց։ (Հ. Միքայէլ [Սեբաստացի] առ Միխիթար, յամին 1740 յունիսի 1. ի Պուտիմ)։

հա.

Ամէն ուրախութիւն եղև այլազեաց և հրացանք արձակեցան ի միւսում աւուր, յետ ելման զօրպայից, թէ փալանքն պէլկոատու եկն։ (Հ. Պողոս վ. առ Միխիթար, յամի 1740 յունիսի 28. [տեղի?])։

հբ.

Ցոյժ ուրախացայ... ևս վասն ջրհորոյն [վանացս] զորմէ ճառեալ էր հայր Թոմաս վարդապետն, թէ արհեստիւ զգործի ինչ չինեցեալ է, մինչ զի միով շարժմամբ եղեալ ջուրն ի բազում տեղիս տարածի, և ընթանայ, և այնու դիւրութիւն եղեալ է եղբարց մերոց։ (Հ. Պետրոս առ Միխիթար, յամին 1740 յունիսի 28. [տեղի?])։

հգ.

Ցաւուրս յայսմիկ մեր ամուճային դեսպանն եմուտ մեծաւ փառօք ի պալատ իւր, և տակաւին ոչ հասկանեցեալ եղև՝ յորում մնացեալ եղև յաղթութիւնն։ Ամենայն ուտելիք են թանկագինք. և բազումք անձինք զուրկք են ուտելոց զմիս. և քամի սայեաղի բոլոր մի վաճառի։ Օգոստոսի 15 մի պատանի 8 ամեայ տաճկացուցեալ և հասեալ ի 18 ամ նահատակեցեալ եղև ազգաւ հայ։ (Հ. Պետրոս վարդապետ առ Միխիթար, յամին 1740 օգոստ. ի 17. [տեղի?])։

հդ.

Ցայտ առնեմ ներկայ գրիս գերապայծառ մինաս եպիսկոպոսին բարեպէս հասանիլն հանդերձ ընկերօքն ամսիս 23. ին։ ([Պատկերահան Ոհաննէս առ Միխիթար, յամին 1741 մարտի 25, [Հռոմ])։

հե.

Ի զատկի կիրակէին ի յէնկիւռի Գ ժամն ուղղափառաց հակառակներս փաշային մարդոքն կողեցին անկարծակի ի ժամանակի ժամասացութեան, և այնու բազում մարդիկք ընասեցան, 4, 5 կին յղի տղայ անցուցին, և այլք ոմանք սակաւ ինչ ընասեցան, այս է ի կողմանէ ուղղափառաց, և զչորս եկեղեցին հակառակորդն առեալ տիրապետեցին, և ապա երկուշաբթի զատկին անկարծակի չարաչար պատուհասեցաւ այն վարդապետն, որ նախ ուղղափառ էր, և սա եղև համախոհ և առաջնորդ հակառակորդաց. և սա գնացեալ խոստացաւ փաշային 15 քէսէ. և 5 տուաւ և յետ տիրապետելոյն եկեղեցեացն պատուհասեցաւ, և փաշան ոչ թողուց թաղել զնա մինչև էառ զտասն քէսէն ևս. և ընդ սմին ևս պատժեցան մէկ հայ քահանայ. կինն փաշային ուտեցեալ սատակեցաւ, և չորս չուխտաւոր նորին պատուհասեցան և սատակեցան...։ Ֆէրման եղև, որ զառեալ ստակս ի յուղղափառաց ետս տայցէ, և ի վերայ եկեղեցեաց հաստատապէս տիրապետեսցին ուղղափառք։ (Հ. Պետրոս վրդ. առ Միխիթար, յամին 1741 մայիսի 7. [կ. Պոլիս?])։